

**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմս(եր) ձեռք բերող հաճախորդների համար
Բանկի այլ ծառայություններից օգտվելու հատուկ պայմաններ
Տեղեկատվական ամփոփագիր**

Օգոստոսի 1, 2017

Բանկի պարտատոմս(եր) ձեռք բերող հաճախորդների համար բանկային պրոդուկտներից օգտվելու հատուկ պայմաններն են.

Ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշիվների վարում ԶԶ դրամով և ԱՄՆ դոլարով	0 ԶԶ դրամ՝ այն տարիների համար, որոնց ընթացքում հաճախորդն ունեցել է չմարված պարտատոմս
Բանկի քարտապան հաճախորդներին գործող վճարային քարտից մեկ դասով ավելի բարձր դասի քարտի տրամադրում	Գործող քարտի տեսակի համար սահմանված սակագներով և դրույքներով
Բանկի ոչ քարտապան հաճախորդներին վճարային քարտի տրամադրում	Գործող սպասարկման վճարի 50%

Վճարային քարտին վարկային սահմանաչափի տրամադրման հնարավորություն՝ հետևյալ պայմաններով.

Տեսակը	Վերականգնվող, առանց արտոնյալ ժամկետի
Արժույթը	ԶԶ դրամ
Մեծությունը	Մինչև գրավադրվող պարտատոմսերի արժեքի 95%
Տարեկան տոկոսադրույքը	14%
Ժամկետը	Ոչ ավել, քան մինչև պարտատոմս(եր)ի մարման ժամկետին նախորդող աշխատանքային օրը

Այլ պայմանները՝ համաձայն համապատասխան ծառայության պայմանների:

Պարտատոմս ձեռք բերող հաճախորդներին ընձեռնվում է հնարավորություն կնքել ռեպո համաձայնագրեր՝ հետզնման պայմանով՝ իր պարտատոմսերը ժամանակավորապես վաճառելու նպատակով: Ռեպո համաձայնագրի պայմանները սահմանվում են ելնելով գործարքի պահին գործող շուկայական գներից և տոկոսադրույքներից:

Բանկի այն ավանդատուները, որոնք ժամկետից շուտ կդադարեցնեն իրենց ժամկետային ավանդի պայմանագիրը և ամբողջ գումարը կամ գումարի մի մասը կներդնեն Բանկի կողմից թողարկված պարտատոմսերում՝ ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում տոկոսագումարի վերահաշվարկ չի կատարվի պայմանով, որ գումարի մասնակի ներդրման դեպքում ավանդի մնացյալ գումարը կվերաներդրվի որպես ավանդ՝ մինչև դադարեցված ավանդի գործողության ժամկետի ավարտը:

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber ` +374 95 511 211
- Skype ` conversebank-callcenter